## ՈՒՐԱԽԱՌԻԹ ԼՈՒՐ ՄԻ

Խերկրութեամբ սրտի կը ծանուցանեմք սիրելի Ազգայնոց, որոնք անհամբեր սրտիւ լուր կըսպասէին Սրբոյ Աթոռոյս կողմանէ Եթովպիա գնացող Խաչակ Արքեպիսկոպոսի և Արժ. Տիմոթէոս վարդապետի ճանապարհորդութեանց մասին թէ՝ ամսոյս մէջ Նամակ ստացանք Մուսաւայէն (1), որ կը գրէ առ Ամե. Սրբազան Պատրիարգ Հայրն՝ ընիկ սեքստոսցի համբաւաւոր վաճառական բարեպաշտ Աղաքել Արթին Աղայ Ճիվիլէկեան ազգասէր անձը. Խաչակ Սրբազանի և իւր ընկերակցաց ողջ և առողջ ըլլալնին. և այժմ Կոնտէռ (2) քաղաքին մօտակաները կը գտնուին. և յատկապէս կը խնդրէին իրմէ ծանուցանել Սրբազան Հօր: Ահաւասիկ եկած նամակին պատճէնը, որ արաբերէն լեզուով գրուած է.

Ամենապատիւ եւ Աստուածարեալ Բարեխնամ Սրբազան Հայր:

Ձեր բարձր սրբազնութեան սուրբ աջոյը համբոյր մատուցանելէն յետոյ, Ձեր Սրբազնութեան աւետիս կուտամ, որ Խաչակ Սրբազան Հայրը և Տիմոթէոս վարդապետը ողջ և առէկ են. իրենցմէ նամակ ստացայ սէֆէր ٧ գրած են ١٢٨٥ (1868 մայիս 7), և նամակը մեզ հասաւ րէպիւլ էվվէլ ١٠ (Յունիս 23). յիշեալները Հապէշիստանին Պընտըր անուանեալ քաղաքին մօտ Կէպառ — Կէպտի ուղի քէշմի կառավարութեան տակն են, և նամակաւ կը ծանուցանէին որ Ձեր Սրբազնութեան լուր տամ յիշեալներուն ողջութեան. և լեր ողջ:

Ստորագրութիւն
ԱՌԱՔԵԼ
ԱՐԹԻՆ ՃԻՎԻԼԷԿԵԱՆ

١٢٨٥ րէպիւլ ախըր ٩
1868 Յունիս 17:

Այս լուրը հաղորդելէն յետոյ անձկանօք սրտի կըսպասեմք Գեր. անձնանուէր Հարց ողջամբ վերադարձին. Եւ այս խնդրոյ մասին Մեծ. Ազգայնոց և Ազգային խմբագրաց կը յանձնեմք իրենց կարծիքը հրապարակ հանել:

---

Հետեւեալ յօդուածը զոր ուսումնական անձէ մը ընդունած եմք հրատարակելու, այժմեան ոմանց թերահաւատից լաւ դաս մի կրնայ համարուիլ, և կարող են համոզուիլ որ միշտ հրաշք եղած է և կ'ըլլայ: Բայց սա ալ ըսելու չեմք վարանիր՝ թէ ամէն դիպուած բարի կամ չար, հրաշք մի է ըսողներուն չափ ալ դիւրահաւան չեմք:

Վօլթէր, Ռուսօն եւ Մոնդէսքիէօ, հրաշքի Վկայք:

Գաղղիական մէկ օրագիրը՝ Օրլէանի Տիւբանլու Եպիսկոպոսին մէկ կոնդակին առթիւ՝ որ կերպասու վրայ անցեալ տարուան մէջ պատահած գէշութիւնները Աստուծոյ կողմանէ պատիժ սեպելով կը յորդորէր ժողովուրդը որ ջերմեռանդն աղօթքով առ Աստուած դիմէ, իր մէկ թերթին մէջ յանդգնեցաւ ըսելու՝ որ ամէն այսպիսի պատահարները բնական բաներ են, Աստուած չխառնուիր. և խօսքին կարգը Աստուծոյ գործած հրաշքներն ալ

(1) Նաւահանգիստ քաղաք Եթովպիոյ. այժմ ընդ իշխանութեամբ Եգիպտական կառավարութեան.

(2) Թագաւորանիստ քաղաք Թէոդորի.